

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ»

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ԿԱՌՈՒՅՑ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐ

ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Ստեփանավան

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

29.03.2019-30.04.2019

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ

25

«Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» ծրագիրն իրականացրել է «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հասարակական կազմակերպությունը Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակությամբ: Ծրագիրը համապատասխանում էր ստեփանավանցի այն երիտասարդների կարիքներին, ովքեր ունեն համայնքի զարգացմանը միտված հետաքրքիր ծրագրային գաղափարներ և դրանք իրականացնելու ցանկություն, սակայն չունեին համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Ծրագիրը կոչված էր շահառու երիտասարդներին հաղորդել ծրագրի մշակման և կառավարման, ինչպես նաև ֆոնդահայթայթման հմտություններ՝ խթանելով Ստեփանավանում երիտասարդների ակտիվ քաղաքացիությանը, նրանց կողմից նոր նախաձեռնությունների, ծրագրերի իրականացմանը, ծրագրերի միջոցով ակտիվ մասնակցությանը համայնքային կյանքին:

Ծրագրի շրջանակում Ստեփանավանում ապրիլի 12-ից 16-ը իրականացվել է հնգօրյա դասընթաց, որին ներկայացված առցանց հայտադիմումների հիման վրա մասնակցության հնարավորություն են ստացել 25 երիտասարդներ Ստեփանավանից և հարակից խոշորացված համայնքներից: Դասընթացի ընթացքում շահառու երիտասարդները կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների կիրառմամբ ստացել են ծրագրեր մշակելու և կառավարելու, ֆոնդհայթայթում իրականացնելու հմտություններ, զարգացրել առաջնորդության կարողություններ, որոնք կարող են կիրառել հետագայում՝ իրենց գաղափարները վերածելով ծրագրային մրցունակ առաջարկների: Կիրառելով դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները՝ նրանք կարող են կատարել ֆոնդհայթայթում, մշակել համայնքի զարգացմանը և խնդիրների լուծմանը միտված տարբեր ծրագրեր, կառավարել այդ ծրագրերը, ինչպես նաև ընդունել դրամաշնորհային ծրագրեր գրելու պատվերներ այլ կազմակերպություններից կամ անհատներից, աշխատել կամ ներգրավվել տարբեր ՀԿ-ների աշխատակազմերում՝ որպես ծրագրային առաջարկ մշակողներ, ծրագրի ղեկավարներ կամ համակարգողներ: Այս ամենը կնպաստի ծրագրի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը, շահառու համայնքում երիտասարդների ակտիվ քաղաքացիությանը, մասնակցության մակարդակի բարձրացմանը ծրագրեր մշակելու և իրականացնելու միջոցով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

«Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» ծրագրի նպատակն է՝ ծրագիր մշակելու և կառավարելու հմտությունների զարգացման միջոցով նպաստել շահառու երիտասարդների անհատական ու սոցիալական զարգացմանը, նրանց ակտիվ քաղաքացիությանը և մասնակցությանը համայնքային կյանքին ծրագրերի մշակման ու իրականացման միջոցով: ***Ծրագիրը նպատակ ունի նաև*** նպաստել շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը և առաջնորդության կարողությունների զարգացմանը. (նրանք կարող են կատարել ֆոնդհայթայթում, մշակել դրամաշնորհային ծրագրեր, կառավարել այդ ծրագրերը, ինչպես նաև ընդունել ծրագրեր գրելու պատվերներ այլ կազմակերպություններից կամ անհատներից, աշխատել կամ ներգրավվել տարբեր ՀԿ-ների աշխատակազմերում՝ որպես ծրագրային առաջարկ մշակողներ, ծրագրի ղեկավարներ կամ համակարգողներ):

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է եղել լուծել հետևյալ խնդիրները՝

1. Համախմբել խոշորացված Ստեփանավան համայնքի և հարակից խոշորացված համայնքների այն երիտասարդներին, ովքեր ունեն ծրագրեր մշակելու և իրականացնելու ցանկություն, սակայն չունեն անհրաժեշտ գիտելիքներ ու կարողություններ և կարիք ունեն ձեռք բերելու (կամ զարգացնելու) ծրագրեր մշակելու և կառավարելու հմտություններ:

2. Թիրախ խմբի համար կազմակերպվել է դասընթաց՝ փոխանցելով գիտելիքներ և հմտություններ ծրագրային առաջարկ մշակելու և կառավարելու, ֆոնդահայթայթման, կամավորության և քաղաքացիական հասարակության, հասարակական կազմակերպությունների գործունեության և առաքելության վերաբերյալ:

3. Բացահայտվել են Ստեփանավանի և հարակից խոշորացված համայնքների երիտասարդությանը հուզող խնդիրները, ձևավորել այդ խնդիրների լուծմանը միտված տարբեր գաղափարներ ունեցող երիտասարդների խմբեր, ովքեր միասին մշակել են ծրագրային առաջարկներ՝ փորձելով իրենց մասնակցությունն ունենալ համայնքային խնդիրների լուծման գործում:

4. Ծրագրի շահառուների համար իրականացվել են խորհրդատվություններ (ըստ խմբերի և անհատական), փորձի փոխանակում՝ աջակցելով նրանց թիմային գաղափարների վերածմանը ծրագրային կոնկրետ առաջարկների, աջակցել կատարելու ֆոնդահայթայթում:

5. Ծրագրային գործողություններով փորձել ենք նպաստել ծրագրի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի մեղմացմանը, առաջնորդության հմտությունների զարգացմանը. (նրանք կարող են կատարել ֆոնդահայթայթում, մշակել դրամաշնորհային ծրագրեր, ներգրավվել այդ ծրագրերում որպես աշխատակից, ինչպես նաև ընդունել ծրագրեր գրելու պատվերներ այլ կազմակերպություններից կամ անհատներից, աշխատել կամ ներգրավվել տարբեր ՀԿ-ների աշխատակազմերում՝ որպես ծրագրային առաջարկ մշակողներ, ծրագրի ղեկավարներ կամ համակարգողներ):

6. Ծրագրային գործողությունները նպաստել են շահառու համայնքում երիտասարդների քաղաքացիական ակտիվության բարձրացմանը և նրանց

մասնակցությանը համայնքային կյանքին տարբեր ծրագրեր իրականացնելու միջոցով:

*ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐ*

Ծրագրով առաջադրված նպատակին հասնելու համար Ստեփանավան քաղաքում անցկացվել է հնգօրյա դասընթաց՝ կառուցված կրթության ֆորմալ և ոչ-ֆորմալ մեթոդների հիման վրա՝ բազմաթիվ տեսական նյութերի (պրեզենտացիաներ, տեսաֆիլմեր), քննարկումների, գործնական վարժությունների, թիմային և անհատական աշխատանքների համադրմամբ: Դասընթացից հետո երկու անգամ շահառու երիտասարդների համար կազմակերպվել է անվճար խորհրդատվություն՝ աջակցելով նրանց ծրագրեր մշակելու, կառավարելու, ֆոնդհայթայթելու հարցում: Կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ մեթոդների կիրառումը շահառուներին հնարավորություն է տվել ձեռք բերել ծրագրի մշակելու և կառավարելու վերաբերյալ տեսական գիտելիքներ և հենց դասընթացի ընթացքում դրանք գործանականում կիրառելով՝ մշակել ծրագրային առաջարկներ: Կիրառված մեթոդները նպաստել են ծրագրի մասնակից երիտասարդների ոչ ֆորմալ կրթությանը, անհատական և սոցիալական զարգացմանը, առաջնորդության կարողությունների զարգացմանը, հնարավորություն տվել ձեռք բերել ծրագրային առաջարկ մշակելու որոշակի փորձ, ինչն էլ կնպաստի շահառու երիտասարդների զբաղվածության խնդրի որոշակի մեղմացմանը, համայնքում քաղաքացիական հասարակության զարգացմանը և երիտասարդների միջոցով համայնքում տարբեր ծրագրերի իրականացմանը: Դասընթացը վարել են ծրագրերի մշակման և կառավարման անհրաժեշտ փորձ և որակավորում ունեցող դասընթացվարներ: Ծրագրի բոլոր փուլերում, այդ թվում՝ նախապատրաստական, ապահովվել է երիտասարդների ակտիվ ներգրավվածությունը (ՀԿ-ի և գործընկեր ՀԿ-ների երիտասարդ կամավորներ, ծրագրի մասնակից և ծրագրով հետաքրքրված այլ երիտասարդներ), որոնց առաջարկներն էլ հաշվի են առնվել ծրագրի իրականացման մեթոդները մշակելիս՝ ավելի շատ ներառելով գործնական վարժություններ և ինտերակտիվ մեթոդներ:

ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԾԱԾԿՈՒՅԹ

Ծրագրի բովանդակությունը ներառում էր հետևյալ թեմաները՝ ակտիվ քաղաքացիություն և քաղաքացիական հասարակության բնութագրիչները, նախաձեռնող խմբեր և հասարակական կազակերպություններ, ՀԿ առաքելությունը և գործունեության կառավարման համակարգը, մարդկային և ֆինանսական

ռեսուրսները, կամավորություն, ինչ է ծրագիրը, ծրագրի տեսակները, ծրագրի մշակման և կառավարման փուլերը (կարիքի գնահատում և իրավիճակի վերլուծություն (SWOT), ծրագրի նպատակը, խնդիրները, ծրագրի կառուցվածք, ժամանակացույց, բյուջե, ազդեցության գնահատում, մոնիթորինգ, արդյունքների տարածում և կիրարկում, ծրագրի հավելվածներ, ծրագրի իրագործում, ամփոփում), ֆոնդհայթայթում, ֆոնդհայթայթման ռազմավարությունը, աղբյուրները, ցիկլը, ֆոնդահայթայթման այլընտրանքային մեթոդներ, քրատոլֆանդինգ և այլ թեմաներ, որոնք համահունչ են թիրախ խմբի հետաքրքրություններին: Ծրագրի ընթացքում ներկայացվել է նաև դրամաշնորհատու կազմակերպության՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային համակարգը, նրա առանձնահատկությունները, դիմելու ընթացակարգը:

Ծրագրի մասնակիցների համար նախատեսված առցանց հայտում ներառված էին հարցեր, որոնք օգնել են ծրագրի կազմակերպիչներին ավելի լավ հասկանալ մասնակիցներ պահանջները և ակնկալիքները ծրագրից՝ ըստ այդմ որոշակի փոփոխություններ և լրացումներ կատարելով դասընթացի օրակարագային թեմաների մեջ :

Կից ներկայացվում է հինգօրյա դասընթացի օրակարգը:

ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԸ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի նախապատրաստական փուլում ներգրավված են եղել ծրագրի ղեկավարը, ադմինիստրատիվ հարցերով համակարգողը, հաշվապահը, դասընթացավարները, ինչպես նաև երիտասարդ կամավորներ: Նախապատրաստական փուլում կնքվել են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ պայմանագրերը, պատրաստվել է դասընթացի մասնակցության հայտադիմումը: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության օնլայն երիտասարդական պարբերականի՝ erit.am կայքի միջոցով, «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի բլոգով և ֆեյսբուքյան էջով, Ստեփանավանի երիտասարդական-հասարակական տարբեր կազմակերպությունների ֆեյսբուքյան էջերով տարածվել է ծրագրի մասին հայտարարություն, կատարվել է մասնակիցների ընտրություն՝ հայտադիմումի

հիման վրա, համաձայնեցվել են հանդիպումները ծրագրում ներգրավված անձանց հետ, կազմակերպվել է մասնակիցների սննդի, սուրճի ընդմիջման հետ կապված բոլոր հարցերը, կարգավորվել դասընթացավարի կեցության հարցը, ձեռք բերվել անհրաժեշտ գրենական պիտույքներ, հստակեցվել դասընթացի թեմաները, մասնակիցներին տրամադրվելիք նյութերը:

Ծրագրի իրականացման փուլում Ստեփանավան համայնքում անցկացվել է 5-օրյա դասընթաց՝ հիմնված ինտերակտիվ մեթոդների վրա: Դասընթացավարները միասին համակարգել են ուսուցման գործընթացը: Դասընթացի արդյունքում մասնակիցները ձեռք են բերել ծրագրեր մշակելու և կառավարելու հմտություններ, կարևորել ակտիվ քաղաքացիության և հասարակական կազմակերպությունների դերը քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում, ծանոթացել ֆոնդիայթայման ռազմավարությանը, հիմնական աղբյուրներին: Նրանք կատարել են համայնքի կարիքների բացահայտում և գնահատում, ապա ըստ համայնքային կարիքների լուծմանը միտված ընդհանուր գաղափարների՝ երիտասարդները միավորվելով երեք խմբերում, մշակել են համայնքի խնդիրների լուծմանը միտված 3 ծրագիր՝

- «Ներգնա տուրիզմի խթանում Ստեփանավանի տարածաշրջանում պատմամշակութային հուշարձանների պահպանման և հանրայնացման միջոցով» ծրագիրը,
- «Երիտասարդական միջհամայնքային ֆուտբոլային մրցաշար Ստեփանավանի տարածաշրջանում» ծրագիրը,
- «Օգնենք իրար» սոցիալական աջակցության ծրագիրը:

Թիմերով աշխատելով վերոնշյալ ծրագրային առաջարկների մշակման վրա՝ երիտասարդները գործնականում սովորել են հստակ ձևակերպել ծրագրի հիմնախնդիրը, նպատակը, խնդիրները, պլանավորել ծրագրային գործողությունները՝ դրանք ըստ տրամաբանական հաջորդականության ներկայացնելով Գանտի աղյուսակի միջոցով: Նրանք, հաշվարկելով նաև իրենց ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների ապահովման ծախսերը, կազմել են ծրագրերի նախնական բյուջեները: Դասընթացի մասնակիցները հաղորդակից են դարձել նաև ծրագրերի գնահատման և վերահսկման մեթոդներին, սովորել և իրականացնել SWOT (ՈւԹՀՄ) վերլուծություն, գնահատել իրենց մշակած ծրագրերի ազդեցությունը ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուների վրա՝ կարևորելով ծրագրերի արդյունքների տարածումը, շարունակականությունն ու կայունության ապահովումը: Նրանք կարևորել են նաև կամավորների ներգրավվածությունը ծրագրերում, ձեռք բերել գիտելիքներ ֆոնդիայթայթման, դրա ռազմավարության, ցիկլի,

Ֆոնդհայթայման հիմնական աղբյուրների վերաբերյալ: Դասընթացի ընթացքում ներկայացվել է նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային համակարգը, դրա առանձնահատկություններն ու դիմելու կարգը:

Ծրագրային նախագծերը գործնականում զարգացնելու նպատակով դասընթացից հետո ծրագրի դասընթացավար-փորձագետները 2 անգամ շահառուների համար իրականացրել են անվճար խորհրդատվություն (անհատական և խմբային) և փորձի փոխանակում՝ աջակցելով նրանց ծրագրային առաջարկների վերջնական մշակման և ֆոնդհայթայթման հարցում: Շահառուների կողմից մշակված ծրագրերի շնորհանդեսին ներկա են եղել Ստեփանավան համայնքի ՏԻՄ ներկայացուցիչները՝ քաղաքապետ Միաքայել Ղարաքեշիշյանը, քաղաքապետի խորհրդական Լևոն Քալանթարյանը, օգնական Նարեկ Այվազյանը: Համայնքի կարիքների լուծմանը միտված երիտասարդների կողմից մշակված երեք ծրագրերն էլ առաջացել են տեղական իշխանությունների հավանությանը: Ավելին, ծրագրերից մեկը՝ «Օգնենք իրար» սոցիալական աջակցության ծրագիրը, որը նախատեսում է երիտասարդների միջոցով համայնքի համեմատաբար ապահով ընտանիքներից հավաքագրել հագուստ ու կենցաղային իրեր՝ դրանք հատկացնելով համայնքի անապահով ընտանիքներին, առաջիկայում Ստեփանավանի քաղաքապետարանի աջակցությամբ կյանքի կկոչվի: Քաղաքապետարանը պատրաստակամ է ծրագրի իրականացման համար տրամադրել տարածք, աջակցել երիտասարդներին կազմակերպչական մի շարք հարցերում: Դասընթացի ավարտին մասնակիցներին հանձնվել են հավաստագրեր և հետագա գործունեության համար անհրաժեշտ ինֆորմացիոն կրիչներ՝ բեռնված դասընթացի թեմատիկ նյութերով և ծրագրային նախագծեր կազմելու վերաբերյալ այլ օգտակար տեղեկատվությամբ ու թեմայի վերաբերյալ ուսումնասօժանդակ նյութերով: Ծրագրի մասին պատրաստվել է տեսաֆիլմ (<https://www.youtube.com/watch?v=VpSdKeZYMBw&fbclid=IwAR00cUBN85P67HPbBizJoGxoV8Rt9sj0EJldkwvcawtaYMrsRaZ736GorJg>), որը ոչ միայն ներկայացնում է ծրագրի ընթացը՝ ապահովելով ծրագրի տեսանելիությունը, այլև անդրադառնում է դասընթացի առանցքային թեմաներին՝ հնարավորություն տալով մասնակիցներին հետագայում, ըստ անհարաժեշտության, դիտել և վերհիշել ծրագրի մշակման և կառավարման կարևոր քայլերը: Ֆիլմը հատկացվել է ծրագրի անմիջական շահառուներին, տեղադրվել ՀԿ-ի բլոգում, ֆեյսբուքյան և յուրօրյան էջերում, տարածվել համացանցում, հատկացվել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

Ծրագրի գնահատման փուլում կատարվել է ծրագրի արդյունքների գնահատում: Գնահատման ոչ-ֆորմալ (բանավոր) և ֆորմալ (հատուկ մշակված անանուն հարցաթերթիկ) մեթոդների համադրմամբ գնահատվել է ծրագրի տեխնիկական, բովանդակային կողմերը, արդյունավետությունը և շարունակականությունը,

դասընթացավարների դասավանդման մեթոդիկան, ճաշի և սուրճի ընդմիջումների, դասընթացի տևողությունը և այլն: Բացի դասընթացի ընդհանուր գնահատումից, մասնակիցների ստացած գիտելիքները գնահատելու համար դասընթացից առաջ և հետո կատարվել է գիտելիքների նախնական և վերջնական գնահատում հատուկ այս ծրագրի համար կազմված գիտելիքների գնահատման թեստերի միջոցով, որում ներառված էր 12 հարց ծրագրի մշակման և կառավարման հմտությունների և ֆոնդահայթայթման թեմաների վերաբերյալ: Գիտելիքների նախնական և վերջնական գնահատմանը մասնակցել են ծրագրի շահառու 25 երիտասարդները: Հարկ է նշել, որ եթե գիտելիքների նախնական գնահատման ժամանակ 300 հարցի համար եղել էր ընդհանուր 152 ճիշտ պատասխան (50,7%), ապա վերջնական գնահատման արդյունքում ճիշտ պատասխանների թիվը հասել էր 261-ի (87%), ինչը բավականին տպավորիչ արդյունք է և թույլ է տալիս եզրահանգել, որ հնգօրյա դասընթացի ընթացքում ծրագրի շահառու երիտասարդները հիմնականում կարողացել են յուրացնել ծրագրեր մշակելու և կառավարելու հմտությունները:

Ծրագրի գնահատման չափանիշ է համարվում նաև այն հանգամանքը, որ ծրագրի արդյունքում մասնակիցների կողմից մշակվել է 3 գրեթե ամբողջական ծրագրային առաջարկ: Երիտասարդների մշակած ծրագրերից «Օգնենք իրար» ծրագիրը արդեն Ստեփանավանի քաղաքապետարանի աջակցությամբ իրականացման փուլում է, քաղաքապետարանը ծրագրի իրականացման համար տրամադրել է անհրաժեշտ տարածք, պատրաստական է աջակցել երիտասարդներին կազմակերպչական տարբեր հարցերում:

(Հաշվետվության կից ներկայացվում են ծրագրի շահառու երիտասարդների կողմից դասընթացի ընթացքում մշակված երեք ծրագրերը՝ կից ժամանակացույցներով և նախնական բյուջեներով:)

Ծրագրի ազդեցությունը դիտարկվել է երկու մակարդակում՝ անհատական և կազմակերպական: Անհատական առումով ծրագրի մասնակիցը զարգացրել է ծրագրային հայտ մշակելու և ծրագիր կառավարելու կարողություններ, ձեռք է բերել ծրագրային գաղափարը կյանքի կոչելու համար անհրաժեշտ գիտելիքներ և առաջնորդության հմտություններ, ծանոթացել ֆոնդահայթայթման աղբյուրներին և ռազմավարությանը: Ծրագրի մասնակիցների ստացած գիտելիքներն ու փորձը, ծրագիր գրելու և կառավարելու հմտությունները որոշակիորեն մեղմել են նաև շահառու երիտասարդների զբաղվածության խնդիրը, քանի որ ծրագրի ավարտից հետո ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների շնորհիվ նրանք կկարողանան գրել ծրագրեր, կատարել ֆոնդահայթայթում, դիմել տարբեր դրամաշնորհների, ներգրավվել այդ ծրագրերում որպես աշխատակից, ինչպես նաև համագործակցել այլ

կազմակերպությունների ու անհատների հետ՝ ընդունելով ծրագրեր մշակելու պատվերներ, աշխատել կամ ներգրավվել տարբեր ՀԿ-ների աշխատակազմերում՝ որպես ծրագրային առաջարկ մշակողները և ծրագրի համակարգողներ, ապա որոշակի փորձ ձեռք բերելուց հետո՝ նաև որպես ծրագրի ղեկավարներ:

Հասարակական առումով անմիջական շահառուների ձեռք բերած գիտելիքներն ունեն բազմապատկիչ նշանակություն, նրանք իրենց գիտելիքներով կիսվում են այլոց՝ ծրագրի անուղղակի շահառուների հետ, տեղի է ունենում ծրագրի արդյունքների բազմապատկում և շղթայական փոխանցում հասարակության լայն շերտերին, ինչն էլ խթանում է համայնքում երիտասարդների քաղաքացիական ակտիվությանը և մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Ծրագրի շարունակականությունն ապահովելու և ձեռք բերած արդյունքներն ու ազդեցությունը զարգացնելու համար ծրագրի ավարտից հետո ՀԿ-ն շարունակում է կապ պահպանել շահառուների հետ: Ծրագրի մասնակիցների հետ միասին մշակվել է ծրագրի շարունակականությունն ապահովող գործիքակազմ, դասընթացավարների կողմից պարբերաբար ցուցաբերվում է մեթոդական և մասնագիտական խորհրդատվություն:

Սույն ծրագրի մասնակցիների և կազմակերպիչների միջև կապի ամրապնդմանը նպաստելու համար ստեղծվել է ֆեյսբուքյան խումբ (<https://www.facebook.com/groups/377989312795893/>) և զրուցարան, որտեղ ծրագրի շահառուները շփվում են ծրագրի աշխատակազմի և միմյանց հետ, շարունակում կիսվել ծրագրային գաղափարներով, աջակցել և խորհուրդներ տալ միմյանց ծրագրեր մշակելու և դրանք կառավարելու վերաբերյալ, համագործակցել միմյանց հետ:

Ծրագիրը հնարավորություն է տվել նաև համախմբել Ստեփանավանի և խոշորացված հարակից համայնքների ակտիվ երիտասարդներին՝ նրանց նորարար գաղափարները, ներուժն ու ակտիվությունն ուղղելով համայնքային խնդիրների լուծմանը, քաղաքացիական հասարակության զարգացմանը: Ծրագրի ընթացքում մասնակիցների ձեռք բերած գիտելիքներն ու փորձը, ձևավորված ընկերական հարաբերություններն ու համագործակցային մթնոլորտը հիմք են, որպեսզի ծրագրի ավարտից հետո շահառուները շարունակեն դրսևորել ակտիվ քաղաքացիություն՝ կատարեն համայնքային խնդիրների բացահայտում և կարքի գնահատում, ապա դրանց լուծման ուղղությամբ մշակեն և իրականացնեն նոր ծրագրեր՝ այսպիսով ունենալով իրենց ներդրումը համայնքի խնդիրների լուծման, տարբեր նախաձեռնությունների ու ծրագրերի իրականացման, համայնքում քաղաքացիական հասարակության կայացման հարցում: Ի դեպ, ծրագրի շահառու երիտասարդներն արդեն իսկ իրականացնում են իրենց մշակած «Օգնենք իրար» ծրագիրը՝ փորձելով օգնել համայնքի անապահով

ընտանիքներին, համայնքում ձևավորելով միմյանց անշահախնդիր օգնելու մշակույթ: Նրանք այդ գործում ներգրավել են նաև իրենց ընկերներին, համայնքի այլ երիտասարդներին:

Այսպիսով՝ «Ծրագիր մշակելու և կառավարելու հմտություններ» ծրագրի ազդեցությամբ շահառու համայնքում բարձրացել է երիտասարդների ակտիվությունը և նրանց նախաձեռնողականությունը և մասնակցության մակարդակը համայնքային կյանքին:

Երիտասարդների դերի և մասնակցության մակարդակի բարձրացումը երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ ոլորտներում ՀԿ-ի համար ունի ռազմավարական նշանակություն և ՀԿ-ն նախատեսում է շարունակել նման ծրագրերը ՀՀ այլ համայնքներում՝ ստեղծելով համագործակցություն շահառու համայնքների երիտասարդների միջև, որտեղ ՀԿ-ի կողմից կիրականացվեն են նմանատիպ ծրագրեր: ՀՀ տարբեր համայնքներում կստեղծվի ծրագրեր մշակող և կառավարող երիտասարդների ցանց, որոնք, համագործակցելով միմյանց հետ, կմշակեն և կիրականացնեն միջհամայնքային և համապետական նշանակության ծրագրեր:

Ծրագրի տեսանկյունից ապահովել են դրամաշնորհատու կազմակերպության՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության erit.am առցանց երիտասարդական պարբերականը, որը նախ տարածել է դասընթացի մասին հայատարարությունը

(http://www.erit.am/news/hy/85137?fbclid=IwAR1YOTwsgIEYmsW0BEPB9i8H9nYaWRyklUf_q4MaW97SXCzN6cUdmDaAEkk), ապա լուսաբանել ծրագրի ընթացքը

(http://www.erit.am/news/hy/85731?fbclid=IwAR0TMY1LIhyap5PV47Y9EVWt0xII0IYcq7VU0x5jTv_r7p0rPIBbyRhonkE8):

Ծրագիրը տեսանկյունից ապահովվել է նաև «ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» ՀԿ-ի բլոգի (<http://kamqngo.blogspot.com>), յություբյան (<https://www.youtube.com/watch?v=VpSdKeZYMBw>) և ֆեյսբուքյան էջերի (<https://www.facebook.com/KAMQNGO/>) միջոցով, ինչպես նաև Ստեփանավանի քաղաքապետարանի և գործընկեր ՀԿ-ների օնլայն էջերով՝ կայք, բլոգ, սոցիալական ցանցեր, որոնք աջակցել են ծրագրի մասին տեղեկատվության տարածման հարցում, կիսվել ծրագրի մասին պատմող գրառումներով: Տարածվող նյութերում նշվել է, որ ծրագիրն իրականացվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ՝ օգտագործելով ՀՀ զինանշանը և ՄԵՀՆ լոգոն:

Ծրագրի իրականացման ընթացքը տեսանկյունից դարձնելու, ինչպես նաև ծրագրի աշխատակազմի և մասնակիցների միջև կապը ամրապնդելու նպատակով ֆեյսբուքում ստեղծվել է հատուկ ծրագրի անունով խումբ (<https://www.facebook.com/groups/377989312795893/>), որտեղ ներառված են ծրագրի

գրեթե բոլոր շահառուները, դասընթացավարները, շահագրգիռ այլ կողմեր և պարզապես ծրագրով հետաքրքրված մարդիկ: Ծրագրի անունով շահառուների համար բացվել է նաև ֆեյսբուքյան զրուցարան, որը հնարավորություն է տալիս կազմակերպել խմբային քննարկումներ, կիսվել գաղափարներ, ծրագրի ավարտից հետո պահպանել միմյանց հետ կապը, համագործակցել... Նշված սոցիալական էջերում, ինչպես նաև ծրագրի մասնակիցների անհատական էջերում դասընթացի մասնակից երիտասարդները պարբերաբար կիսվել են ծրագրի ընթացքը ներկայացնող փաստերով՝ լուսանկարներ, տեսանյութեր, ուղիղ միացումներ դասընթացից, դիտարկումներ, մեկնաբանություններ: Ծրագրի մասին պատրաստվել է նաև տեսաֆիլմ (<https://www.youtube.com/watch?v=VpSdKeZYMBw>), որը ոչ միայն ապահովում է ծրագրի տեսանելիությունը, այլև ունի ուսումնական բնույթ. անդրադառնում է դասընթացի առանցքային թեմաներին՝ հնարավորություն տալով ծրագրի շահառուներին, տեսաֆիլմը դիտելով, վերհիշել ծրագրի մշակման և կառավարման կարևոր քայլերը: Այն տրամադրվել է ծրագրի շահառուներին, տեղադրվել ՀԿ-ի յուրօրյան և ֆեյսբուքյան էջերում, տարածվել համացանցում՝ ապահովելով և՛ ծրագրի տեսանելիությունը, և՛ նպաստելով ծրագրի արդյունքների տարածմանն ու կիրարկմանը: Տեսաֆիլմը տրամադրվել է նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը:

ԾՐԱԳՐԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԷՋԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ՝



www.eri.am/news/hy/85731?fbclid=IwAR0TMY1Llhyap5PV47Y9EWi0x10YQCQ7VU0x5JTVr7p0rPIBbyRn0kE8

Երիտասարդ

Ստեփանավանում ավարտվեց «Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» ծրագիրը

Նյութը «Կամբ» Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի 34-ից
 Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի 34-ից
 Տեղադրվել է 30-04-2019



«ԿԱՄԲ» Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի հասարակական կազմակերպությունը 30 ապրիլի և Երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ 2019 թ. ապրիլին Լուսիկա Երիտասարդական համայնքում համայնքային «Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» ծրագիրը ավարտվեց:

Վերջին լուրերը


- Մերեն Աննապոլսյան «Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի 34-ից»
- Ինչպես են տոտում մայիսի 9-ը տարբեր երկրներում
- «Անապոլսյան իրազեկման կենտրոնի 34-ից»
- Ռեզիստենցիայի դուրս ելած կատարող աղջիկները Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի 34-ից

https://kamqgo.blogspot.com/2019/04/blog-post_8.html

«ԿԱՄԲ» Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի հասարակական կազմակերպություն

«Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» դասընթացի մասնակցության հրավեր ստեփանավանցի երիտասարդների համար

- апреля 08, 2019





«Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ»

«Կամբ» Լուսիկա Երիտասարդական ծրագրերի կենտրոնի հասարակական կազմակերպությունը Ստեփանավանի և հարակից համայնքների 16-30 տարեկան երիտասարդներին հրավիրում է մասնակցելու «Ծրագրի մշակման և կառավարման հմտություններ» հնգօրյա դասընթացին:


Դասընթացի ընթացքում մասնակիցները ճնշ կերպով ծրագրի մշակելու և կառավարելու հմտություններ, մասնավորապես՝ կարողանան կատարել համայնքի կարիքների գնահատում, մշակել կարիքների լուծմանը միտված ծրագրային մրցունակ առաջարկներ, կազմել ծրագրի իրականացման ժամանակացույց (Չանտի աղյուսակ), ծրագրային բյուջեի նախագիծ, կատարել իրավիճակի վերլուծություն (SWOT) և վերահսկողություն (մոնիթորինգ), իրականացնել ֆոնդայաբանում:

Դասընթացի ընթացքում կենտրոնացվի նաև 33 ապրիլի և Երիտասարդության հարցերի նախարարության




«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հա...

- **«Էնթենա ստրիկտի խրատում Մտեֆանովսկի ստրատեգիանում պատմաբանությանն հուշարձանների պահպանման և հանրայնացման միջոցով»**
- **«Երիտասարդական կենտրոնների ֆուտուրային մրցաշար Մտեֆանովսկի ստրատեգիանում»**
- **«Օգնենք իրար» ծրագրերը:**



Քիչ մեծով աշխատելով վերանայալ ծրագրային ստորագրիների մշակման վրա՝ երիտասարդները գործնականում ստիպեցին հասակ ձևակերպել ծրագրի կիմանեկերը, նպատակը՝ լեռնիները պլանավորեցին ծրագրային գործարարությունները՝ դրանք ըստ սրտնարանական հաղորդակցության ներկայացնելով Փանոսի աղյուսակի միջոցով


Նրանք հաշվարկեցին նաև իրենց ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և կրթական ռեսուրսների ապահովման ծախսերը՝ կազմելով ծրագրերի նախնական բյուջեները: Այնուհետև դասընթացի մասնակիցները հաղորդակցեցին դարձան ծրագրերի գնահատման և վերանայման մեթոդներին, կատարեցին SWOT (ՈւժՁՆՄ)



Վերլուծություն, ապա վերանայման գնահատում իրենց մշակած ծրագրերի ազդեցությունը ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուների վրա՝ կարևորելով ծրագրերի աշխույժների տարածումը: շարունակականությունն ու կայունությունն ապահովումը:


«ԿԱՄՔ» Լոռվա երիտասարդական ծրագրերի կենտրոն» հա...

Կենտրոնի անցկացրած «Օգնենք իրար» ծրագրերի շրջանակում հիմնական աղբյուրներին՝ Նրանք ուշադրությունը ներկայացրել են ևս Նախատանի Հանրապետության սարսիկ և երիտասարդության հարցերի նախարարության դրամաշնորհային համակարգը, դրա առանձնահատկություններն ու դիմելու կարգը:






Պատերազմի ավարտին կատարվեց երիտասարդների մշակած ծրագրերի շնորհանդես, որին ներկա էին նաև Մտեֆանովսկի թատրոնի Միլիան Մրջայակ Դարաբեշիջյանը, թաղաքապետի խորհրդակցական Անու Ֆուսանյանը և օգնական Նարեկ Այվազյանը: Երիտասարդների մշակված ծրագրային ստորագրիներն արժանացան Մտեֆանովսկի թաղաքային իշխանությունների հավանությունը և

ներկայացված ծրագրային ստորագրիները «Օգնենք իրար» ծրագրերը՝ որը նախատեսում է երիտասարդների միջոցով համայնքի համանախարար ազգային ընտանյակների հավաքագրել հոգևոր և ֆինանսական իրերը՝ դրանք նախկիններով համայնքի անապահով ընտանյակներին առաջնություն Մտեֆանովսկի թաղաքապետարանի աջակցությամբ կյանքի կոչվել:



Քաղաքապետարանը պատրաստակամ է ծրագրի իրականացման համար սրտնարան աջակց, աջակցել երիտասարդներին կազմակերպական մի շարք հարցերում:





Facebook page for "ՀԱՅԲ ԼՈՒՎԱ ԵՐԽՈՒՍԱՊՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԵՆՏՐՈՆ" (KAMQNGO). The page features a profile picture, a cover photo, and a post from May 2, 2019, at 1:23 AM. The post text reads: "ՀԱՅԲ ԼՈՒՎԱ ԵՐԽՈՒՍԱՊՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԵՆՏՐՈՆ" added 68 new photos to the album "Ծրագրի մշակման և կառավարման հիմնադրամներ" in Step: Anavan, Lori, Armenia. The post includes a photo of a meeting and a video thumbnail. The page also shows navigation tabs (Home, Create, etc.), a "Page Tips" section, and a "Team Members" list including Nazeli Avagyan. The right sidebar displays "INSTANT GAMES", "YOUR GAMES", "YOUR PAGES", "CONTACTS", and "GROUP CONVERSATIONS". The bottom status bar shows the location as RU and the time as 3:17 AM on 05/10/2019.

A second screenshot of the same Facebook page, showing a different post from May 2, 2019, at 1:23 AM. The post text reads: "ՀԱՅԲ ԼՈՒՎԱ ԵՐԽՈՒՍԱՊՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԵՆՏՐՈՆ" added 93 new photos to the album "Ծրագրի մշակման և կառավարման հիմնադրամներ" in Step: Anavan, Lori, Armenia. The post includes a photo of a meeting and a video thumbnail. A pop-up window for "Արագած ԿԱՍՅԱՆԱՆ" (Arakach Kasanyan) is visible, showing a profile picture and the text "Politician · 2,188 likes". The page layout and navigation elements are consistent with the first screenshot, but the "Team Members" list is empty. The bottom status bar shows the location as RU and the time as 3:18 AM on 05/10/2019.

Browser tabs: (1) Կ x, Untl x, «Յր» x, Sbu: x, Sbu: x, f (5) x, Blog x, Untl x, Blog x, «ՎՍ» x, Յար: x, Sbu: x, You: x

Address bar: https://www.facebook.com/KAMQNGO/

Navigation: Приложения, av, Mail, Չուխյան ավալ... f av, Mail.Ru, Поиск в Интернете, Aharon Stepanyan, jasita - Поиск в Go..., Սիրիդր որ սիրվես..., f Job.am

Page: ԿԱՄՔ Լուվա Երիտասարդական ծրագրերի կենտրոն

Page Actions: Liked, Following, Share, Add a Button

Post: ԿԱՄՔ Լուվա Երիտասարդական ծրագրերի կենտրոն added 53 new photos to the album: «Ծրագրի մշակման և կառավարման հիմնություններ» — in Step'Anevan, Lori, Armenia. May 2 at 1:23 AM

Text: Առեմիանաևանցի երիտասարդները, Լորուրյան Ֆրոնտ և ու Ֆրոնտ մեթոդների կիրառմամբ սովորում են վճարել «Ծրագրային առաջարկներ» նպատակի և ինտրոյեկտի մասերում, ծրագրային արժեքորոշումների պատկերով և ժամանակացույցի կազմում...

Image: A group of young people sitting around a table in a meeting room.

Caption: «Ծրագրի մշակման և կառավարման հիմնություններ» 92 Photos

Page Tips: Know Friends Who Might Like Your Page? Invite friends to like ԿԱՄՔ Լուվա Երիտասարդական ծրագրերի կենտրոն and help you connect with more people.

Create a Group for Your Page: Help your audience connect in a group. Groups are separate spaces for you to have discussions, plan events, share photos and more. You can invite people in the group as your Page or yourself.

Team Members: Nazeli Avagyan

Language: English (US) - Հայերեն - Русский - Español - Português (Brasil)

Privacy: Terms - Advertising - Ad Choices - Cookies - More - Facebook © 2019

Right Sidebar: INSTANT GAMES, YOUR GAMES, YOUR PAGES, CONTACTS, GROUP CONVERSATIONS

Browser tabs: (1) Կ x, Untl x, «Յր» x, Sbu: x, Sbu: x, f (5) x, Blog x, Untl x, Blog x, «ՎՍ» x, Յար: x, Sbu: x, You: x

Address bar: https://www.facebook.com/KAMQNGO/

Navigation: Приложения, av, Mail, Չուխյան ավալ... f av, Mail.Ru, Поиск в Интернете, Aharon Stepanyan, jasita - Поиск в Go..., Սիրիդր որ սիրվես..., f Job.am

Page: ԿԱՄՔ Լուվա Երիտասարդական ծրագրերի կենտրոն

Page Actions: Liked, Following, Share, Add a Button

Post: ԿԱՄՔ Լուվա Երիտասարդական ծրագրերի կենտրոն added 50 new photos to the album: «Ծրագրի մշակման և կառավարման հիմնություններ» — in Step'Anevan, Lori, Armenia. May 2 at 2:26 AM

Text: Դասընթացի մասնակիցները հարդրակից են ուսումնառում ծրագրերի արժեքի անմիջական արժեքորոշման գնահատման մեթոդներին, շարունակականության աստիճանի մեխանիզմներին: Լուսնը ուղարկվել է Ներկայացվել նաև ԳԿ ստորի և Երիտասարդական հարցերի նախադրույթային դրամայի խմբակային համակարգ, դիմելու կարգի ու աստիճանատեսքները:

Image: A group of young people standing and talking in a meeting room.

Caption: «Ծրագրի մշակման և կառավարման հիմնություններ»

